

iCredo

ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ստորև օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը

«Հաճախորդ», «Դուք», «Ձեր», «Ձեզ» - iCredo վարկատեսակից օգտվող կամ օգտվելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձ,

«Ընկերություն», «Մենք», «Մեր», «Մեզ» - «Կրեդո Ֆինանս» ՈւՎԿ-ը ստեղծված վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ Կենտրոնական բանկի 2013թ. փետրվարի 5-ի թիվ 30Ա որոշմամբ, պետական գրանցման վկայական թիվ 169, գրանցման համարը՝ 38, ՀՎՀՀ՝ 00120937),

«Կայք» - www.icredo.am հասցեում կամ www.credofinance.am կայքի համապատասխան բաժնում մատչելի ինտերնետային տեղեկատվական ռեսուրս, որն օգտագործվում է iCredo վարկատեսակի տրամադրման համար:

«Անձնական էջ» - Կայքի համապատասխան բաժին, որն անհատականացված է յուրաքանչյուր հաճախորդի համար և օգտագործվում է iCredo վարկատեսակի տրամադրման և սպասարկման նպատակով Հաճախորդի հետ կապ հաստատելու համար:

«Դիմում» - Ձեր կողմից Ընկերությանը ներկայացված էլեկտրոնային դիմում, որով առաջարկում եք կնքել iCredo վարկի տրամադրման պայմանագիր:

«Առաջարկ» - Ընկերության կողմից էլեկտրոնային ձևով Ձեր էլեկտրոնային հասցեին ուղարկվող Վարկի ստացման առաջարկ (օֆերտա), որը սահմանում է iCredo վարկատեսակի՝ Ձեզ առաջարկվող պայմանները: Ձեր կողմից Առաջարկի ստորագրումը բջջային հեռախոսով կամ Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրության մեջ նշված կողով նշանակում է, որ Ձեր և Ընկերության միջև կնքվել է վարկային պայմանագիր:

1. Վարկ ստանալու համար անհրաժեշտ է.

ա) գրանցվել Կայքում՝ մուտքագրելով Ձեր անունը, ազգանունը, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, անձնագրի տվյալները, սոցիալական քարտի համարը (հանրային ծառայությունների համարանիշը), ինչպես նաև Կայքի համապատասխան դաշտերում պահանջվող մյուս տվյալներ:

բ) ծանոթանալ և ընդունել «Կրեդո Ֆինանս» ՈւՎԿ ՓԲԸ Վարկավորման ընդհանուր պայմանները, iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանները, ծառայության նկարագիրը:

Գրանցումը Կայքում

2. iCredo վարկատեսակից օգտվելու համար անհրաժեշտ է նախևառաջ գրանցվել Կայքում: Խնդրում ենք մուտք գործել Կայք և դրա համապատասխան բաժիններում լրացնել պահանջվող տվյալները: Ձեր տվյալների մուտքագրումից հետո Ձեր բջջային հեռախոսին կուղարկվի SMS հաղորդագրություն, որը պարունակում է Կայքում գրանցման համար նախատեսված մեկանգամյա օգտագործման կոդ: Կայքում գրանցումն ավարտելու համար անհրաժեշտ է համապատասխան դաշտում մուտքագրել կոդը: Կոդի մուտքագրումը նշանակում է, որ Դուք հաստատում եք, որ Մեզ տրամադրված տվյալները ճիշտ և արժանահավատ են, ինչպես նաև ընդունում եք «Կրեդո Ֆինանս» ՈւՎԿ ՓԲԸ Վարկավորման ընդհանուր պայմանները և iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանները, ծառայության նկարագիրը:

Վարկի տրամադրումը

3. Կայքում գրանցումն ավարտելուց հետո Դուք կարող եք դիմել iCredo վարկ ստանալու համար՝ Կայքում առցանց (օնլայն) եղանակով ներկայացնելով Դիմում և լրացնելով դրա համար պահանջվող տվյալները, ինչպես նաև նշելով iCredo վարկի ստացման եղանակները՝ քարտային հաշվին փոխանցումով կամ Մեր մասնաճյուղերում առձեռն:

4. Ձեր դիմումն ստանալուց հետո Ընկերությունն իրականացնում է Ձեր վարկունակության գնահատում, որը, որպես կանոն, կատարվում է առցանց եղանակով՝ Ձեր կողմից տրամադրված տվյալները համադրելով վարկունակության գնահատման համակարգերի և Ընկերությանը մատչելի այլ աղբյուրների տվյալների հետ: Դուք համաձայնում եք և լիազորում եք Ընկերությանը կապ հաստատել Ձեզ, Ձեր գործատուի և այլ անձանց հետ՝ Ձեր կողմից տրամադրված տվյալների ստուգման և/կամ լրացուցիչ տվյալներ ձեռքբերելու նպատակով:

5. Ընկերությունը կիրառում է հաճախորդների նույնականացման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ 3D Secure համակարգ, որը կարող է ենթադրել Ձեր քարտային

հաշվին առկա միջոցների սիմվոլիկ մասի գանձում՝ ARCA, VISA, MASTERCARD և այլ վճարահաշվարկային համակարգերի կանոնների համապատասխան: Հաճախորդի նույնականացման ստուգումը, որպես կանոն, կատարվում է Կայքում առաջին անգամ գրանցվելիս, այդուհանդերձ Ընկերությունը կարող է Հաճախորդի նույնականացում իրականացնել նաև հետագայում՝ մերժելով ցանկացած գործառնության իրականացումը Հաճախորդի նույնության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում:

6. Դուք տեղյակ եք և ընդունում եք, որ Ընկերությունը կաշկանդված չէ Դիմումով և կարող է իր հայեցողությամբ մերժել վարկի տրամադրումը՝ ներառյալ՝ Վարկային պայմանագրի ստորագրումից հետո, ինչի մասին համապատասխան հաղորդագրություն է տեղադրվում Ձեր Անձնական էջում:

7. Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ Ձեր վարկունակության գնահատման հիման վրա Ընկերությունը կարող է Ձեզ առաջարկել Ձեր դիմումի մեջ նշված վարկի գումարից ավել կամ պակաս գումար, մարման այլ ժամկետներ և պայմաններ:

8. Ձեր դիմումը բավարարելու դեպքում Ընկերությունը Ձեր էլ. հասցեին ուղարկում է Առաջարկ քարտով ստանալու տարբերակը նշված լինելու դեպքում կամ ծանուցում վարկը մասնաձյուղից ստանալու դեպքում: Առաջարկը պատրաստ լինելու պահին Ձեզ ուղարկվում է SMS հաղորդագրություն, որտեղ բերված կոդը ենթակա է մուտքագրման Կայքի համապատասխան դաշտում: Կոդի մուտքագրումը հավասարեցվում է ձեռագիր ստորագրությանը, որով Դուք ընդունում եք Ընկերության առաջարկը, և Ձեր և Ընկերության միջև Վարկային պայմանագիրը համարվում է կնքված:

9. Դուք կարող եք ընդունել Առաջարկը՝ այն Ձեր էլ. փոստին ուղարկելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Դուք կարող եք չընդունել Ընկերության Առաջարկը, որի դեպքում Ձեր և Ընկերության միջև վարկային պայմանագիր չի կնքվում և Ձեզ վարկ չի տրամադրվում:

10. Վարկի գումարը փոխանցվում է Ձեր կողմից նշված Ձեր քարտին (քարտային հաշվին) կամ Ձեզ հանձնվում iCredo համակարգին ինտեգրված դրամական փոխանցումների համակարգերի և այլ վճարային գործիքների միջոցով (մատչելիության դեպքում), ինչի մասին Ընկերությունը Ձեզ տեղեկացնում է Ձեր անձնական էջում ծանուցում տեղադրելով:

11. Խնդրում ենք հավաստիանալ, որ Ձեր կողմից մուտքագրված քարտի տվյալները ճիշտ են, Ձեր քարտը վավեր է, քարտային հաշիվն արգելանքի տակ չէ, սառեցված չէ և այլ կերպ դրա տնօրինումը սահմանափակված չէ:

12. Դուք տեղյակ եք և համաձայնում եք, որ Վարկի գումարը համարվում է տրամադրված Ընկերության կողմից վարկի գումարը փոխանցելու մասին վճարման հանձնարարականը կատարման ներկայացնելու պահից: Ընկերության կողմից Վարկի գումարը Ձեզ տրամադրելու պատշաճ ապացույց է համարվում Ընկերության հաշվից վարկի գումարի փոխանցման վճարման հանձնարարականը: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից ոչ ճշգրիտ, ոչ լրիվ կամ ոչ արժանահավատ տվյալներ տրամադրելու, ինչպես նաև Ընկերությունից անկախ այլ պատճառներով վարկի գումարը Ձեր կողմից ստանալու անհնարինության համար:

13. Դուք համաձայնում եք, որ Ընկերությունն իրավունք ունի Ձեր անունից ուղղակիորեն դիմել Ձեր քարտը սպասարկող բանկին՝ iCredo վարկի ստացման փաստը հաստատող Ձեր հաշվի քաղվածք կամ այլ գրավոր ապացույց ձեռքբերելու նպատակով: Այդ նպատակով Դուք հանձնարարում և լիազորում եք Ընկերությանը ուղղակիորեն դիմել Ձեր քարտը սպասարկող բանկին և ստանալ համապատասխան տեղեկություններ և պարտավորվում եք Ընկերությանն ու Ձեր քարտը սպասարկող բանկին զերծ պահել վերոհիշյալի հետ կապված ցանկացած պահանջներից, վնասներից և պատասխանատվությունից:

Վարկի մարումը

14. Վարկը ենթակա է մարման Առաջարկում նշված ժամկետում: Մարումները հնարավոր է կատարել «Արդշինբանկ» ՓԲԸ մասնաճյուղերում, TellCell տերմինալներում, IDRAM վճարահաշվարկային համակարգի միջոցով և Ընկերության մասնաճյուղերում:

15. Վարկի վաղաժամկետ մարման դեպքում հաշվարկվող տոկոսները (կիրառելիության դեպքում) ձևակերպման և այլ վճարները վերադարձման ենթակա չեն: Ընկերության կողմից սահմանված դեպքերում վաղաժամկետ մարում կատարած հաճախորդներին կարող են տրամադրվել բոնուսային միավորներ, որոնք կարող են օգտագործվել Ընկերության ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու համար՝ Ընկերության կողմից սահմանված կարգով:

Այլ պայմաններ

16. iCredo վարկի տրամադրման համար անհրաժեշտ տվյալներն Ընկերությունը հավաքագրում և ստուգում է օնլայն եղանակով, որի համար օգտագործվում են կապի օպերատորների, ինտերնետային և այլ ծառայություններ մատուցողների ծառայություններ: Ընկերությունը կիրառում է Կայքի անվտանգության ապահովման հուսալի և ժամանակակից միջոցներ: Այդուհանդերձ, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Կայքի մատչելիության, այն օգտագործելիս երրորդ

անձանց տվյալների բացահայտման, ինչպես նաև Ձեր այլ վնասների և կորուստների համար:

17. iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանների նկատմամբ կիրառելի են «Կրեդո Ֆինանս» ՈւՎԿ ՓԲԸ Վարկավորման ընդհանուր պայմանները: Սույն վարկատեսակի ընդհանուր պայմաններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Վարկավորման ընդհանուր պայմաններում բերված իմաստը, եթե այլ բան չի բխում համատեքստից: iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանների և Վարկավորման ընդհանուր պայմանների միջև հակասությունների դեպքում գերակայում են iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանների դրույթները: iCredo վարկատեսակի ընդհանուր պայմանները կարող են փոփոխվել «Կրեդո Ֆինանս» ՈւՎԿ ՓԲԸ Վարկավորման ընդհանուր պայմաններով սահմանված կարգով: